ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «27» մայիսի, 2021 թ.

ՀՐԱՄԱՆ № 13-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պաշտոնակատարի 2021 թվականի մայիսի 26-ի N 845-Ա/2 հրամանը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթը (այսուհետ՝ մրցույթ) պատշաճ կազմակերպելու նպատակով՝

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Շ.Աղաբեկյան)՝ ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը և մրցույթի հրավերի փաթեթի զետեղումը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի պաշտոնական կայքում:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչությանը (պետ՝ Կ. Ղարիբյան)՝

1) մրցույթի հայտ ներկայացնող գիտական խմբերի համար կազմակերպել տեղեկատվական խորհրդատվության տրամադրումը,

2) ապահովել կազմակերպություններից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների մրցույթի արդյունքների մասին կազմակերպության ղեկավարներին սահմանված կարգով իրազեկումը,

3) կազմակերպել մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարների հետ ֆինանսավորման պայմանագրերի կնքումը:

3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Ռ. Ասատրյան)՝

1) ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,

2) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը:

4. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ Տ. Գալստյան)՝ սահմանված կարգով ապահովել հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների տրամադրումը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Արթուր Հովսեփյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ